

կորզները կը մազկոննէ: Բարերը կը թնդան պարապ գոգուածքներու պէս»:

Եւ կամ, տեսէք, Իսրայէլի ժողովուրդը Եգիպտոսէն դուրս հանելու համար, երկինքէն Փարաւոնի գլխուն ուղարկուած պատիժներու նկարագրութեան հետեւեալ մասը:

«Մինայի մարդուն ձեռքը օդը կը ծեծէ օձաձև դաւազանով. սոսկումը կը սաւառնի ճախճախուտ շամբերէն ու նեխած ջրերէն: Կոշկոռոտ գորտեր ու լերկագլուխ դողոշներ քաղաքներու բնակչութիւնը կ'ահաբեկեն: Ո՞վ Տէր, ի՞նչ են այդ ողորմագին ճիշերը: Հացի տաշտերէն հեռու կը փախչին կիներ, իրենց թեղանիքները հանգրիճած: Գորտերու անթարթ աչքերը, պանդ իրենց նայուածքին, ու մերկ իրենց լերկութեան մէջ, կը խոզկն հանդարտ քունը դիցանուշներուն, որոնք սնդուսէ անկողիններու հեղտանքը կը վայելէին: Բամբիշները իրենց առագաստի սենեակները կը լքեն. մեղրալուսիններու ցայգերգը կը լռէ քինոր-ներու և կիճՍիտ-ներու թելերէն, զազիր գորտերու սևերես ներկայութիւնով»:

«Դրուագներ»-ուն մէջ այս տեսակ հատուածներ շատ կան, որոնք ցոյց կուտան թէ՛ հակառակ ոմանց՝ կարծածին՝ սրբան ճկուն է աշխարհաբար լեզուն, որքան դուրսթեք՝ արտայայտայտելու համար մտածումի ամենանուրբ ձևերը, զգայութեան ամենախուսափուկ երանգները:

### Տ. Զաւէն

«Повесть Гражданской скорби». Избр. стихотв. арм. поэта Рафаэла Патканяна. Издание Аракела Дервиза, Москва 1904 г. цена 80 коп.

Առաջել Դերվիշը երկու տարի առաջ լոյս ընծայեց «Современные армянские поэты» անունով գիրքը, որով մեր նորագոյն բանաստեղծներն էր ծանօթացնում ոչ միայն ռուս հասարակութեան, այլև հայ հասարակութեան «խնտիլ-գինտ» և «բուրժուա» կոչուած դասակարգերին, որոնց ներկայացուցիչների մեծագոյն մասը հայերէն չի կարդում, չի հասկանում: Պ. Ա. Դերվիշի այդ համակրելի ձեռնարկութիւնը առանձին ուշադրութեան արժանի էր նմանապէս այն պատճառով՝ որ հայ բանաստեղծները երևան էին հանուում ռուս բանաստեղծների թարգմանութեամբ. բանաստեղծութիւնը լաւ թարգմանել կարող է միայն բանաստեղծը:

Իր նոր հրատարակած երկրորդ գրքում պ. Դերվիշը ծանօթացնում է հայերէն չիմացողներին մեր ամենանշանաւոր ազգային բանաստեղծ՝ Ռաֆայէլ Պատկանեանի հետ,

նոյնպէս ոռւս յայտնի բանաստեղծների թարգմանութեամբ: Գրքի ներածութիւնը գրել է պ. Դերվիշը, իր համառօտ տեսութեան մէջ նա տալիս է հայոց նոր գրական լեզուի զարգացման ուրուագիծը, Վ. Պատկանեանի կենսագրութիւնը և նրա բանաստեղծական գրուածքների գնահատութիւնը: Այդ տեսութեան մէջ ոճի մի անճշտութիւն կարող է կարծեցնել, թէ ոչմերոսը, Վիրգիլիոսը, Շատոբրիանը կայն թարգմանուել են Հնդկաստանում և ոչ Վենետիկում (տես եր. 6)...

Գիրքը նուիրուած է Գ. Ի. Գանանեանի յիշատակին, որ Ռափայէլ Պատկանեանի ամենամտերիմ բարեկամն էր: Ընթերցողի ուշադրութիւնն ենք դարձնում այս համարում զետեղուած Ռ. Պատկանեանի նամակների վրայ, որոնցից մէկում նա շատ լաւ բնորոշում է իր ուղղութիւնը և, կ'ասենք, նշանակութիւնը մեր գրականութեան մէջ (տես երես 89—90):

Na.

Bousroif, «Ռուբէնի զրադմուսներ» մասն առաջին, թարգմ. աստերէնից. Ս. Պետերբուրգ, 1904, գինն է 25 կոպ. (նուէր մանուկներին):

Դժբախտ հայ մանուկները զուրկ են լաւ հայերէն գրքերից: Մանաւանդ 5—7 տարեկան երեխաները մեզանում համարեա ոչինչ չունին մատչելի իրանց հասկացողութեան և ձրգտումներին: Բերած վերնագիրը կրող գիրքը գալիս է մասամբ լրացնելու այդ պակասը. մատչելի նիւթը, լեզուն, բազմաթիւ նկարները, մաքուր հրատարակութիւնը—բոլորը լաւ են, և հայ մանուկը կարող է իսկ որ ուրախանալ այդ նուէրով: Ամեն մէկը սով մանուկների հետ գործ ունի, գիտէ թէ օրէցօր նրանց աճող ուղեղը որքան հարցեր է առաջարկում մեծերին. «այդ ի՞նչ է. ինչի՞ համար. որ ի՞նչ լինի» կայն կայն: Մեզանում մեծերը սովորաբար կամ անմիտ պատասխաններ են տալիս կամ լռեցնում են հարցասէր մանուկին ասելով. «զայնէս տարար, սնուս արա»: Եւ ի՞նչ անեն յաճախ իրանք ևս մանուկներից ոչ պակաս տգէտ ծնողները... Այո, պէտք է մտածել որքան կարելի է շատ տալ մեր մանուկներին այդպիսի նուէրներ...

Շ.